«ՆԱՏՖՈՒԴ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2022թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՆԱՏՖՈՒԴ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերին

ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է «ՆԱՏՖՈՒԴ» փակ բաժնետիրական ընկերության (Ընկերության) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին, դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով կից ֆինանսական հաշվետվությունները՝ բացառությամբ «Վերապահումով կարծիքի հիմքեր» բաժնում նկարագրված հարցերի, տալիս են Ընկերության՝ 2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

ՎԵՐԱՊԱՀՈՒՄՈՎ ԿԱՐԾԻՔԻ ՀԻՄՔԵՐ

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ արտացոլված է 13,200,018 հազար ՀՀ դրամ գումարով ոչ նյութական ակտիվ, որն իրենից ներկայացնում է բաղադրատոմսերի գծով վերագնահատումը, սակայն նշված ոչ նյութական ակտիվը նախապես ճանաչված չի եղել (ու չէր կարող ճանաչվել), իսկ վերագնահատման ժամանակ Ընկերությունը պետք է հիմք ընդուներ դրա իրական արժեքը՝ առաջնորդվելով ՀՀՄՍ 38-ով, ինչը տեղի չի ունեցել:

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվության մեջ արտացոլված 2,061,052 հազար ՀՀ դրամ գումարով դեբիտորական պարտքի, ինչպես նաև 6,943,237 հազար ՀՀ դրամ գումարով կրեդիտորական պարտքերի գծով մեզ չհաջողվեց ձեռք բերել արտաքին հավաստումներ, միևնույն ժամանակ չէինք կարող իրականացնել այլընտրանքային ընթացակարգեր դրանց հաստատման նպատակով: Վերոհիշյալ խնդիրների արդյունքում չէինք կարող որոշել դրանց ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությանց՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆԵ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հիմանդրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՈՒԴԻՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՈՒԴԻՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն , որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք պմասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝մեր կարծիքն արտահայտելու համար:

- Խարդախության արդյունք հանդիսցող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:

- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան- 13.11.2023թ.

ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ ՍՊԸ

Գլխավոր Տնօրեն Գոռ Դավթյան

Որակավորված աուդիտոր Հայկ Պողոսյան

«ՊԻ ԿԱ ԷՖ ԱՈՒԴԻՏ ՍԵՐՎԻՍ» "PKF AUDIT SERVICE" 00419022

ՀՀ, ք. Երևան, Խանջյան 19, 4-րդ հարկ, գրասենյակ 5, Հեռ.՝ +37411-577-544,
էլ.հասցե՝ auditservicellc@gmail.com, վեբ կայք՝ www.pkfarmenia.com

«ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....2

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....3

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....4

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ.....5

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....6

«ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթ.	31.12.2022թ.	31.12.2021թ.
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	14	1,941,468	1,996,169
Ոչ նյութական ակտիվներ	14	13,205,371	13,207,320
Ոչ ընթացիկ կանխավճարներ		16,701	16,701
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**15,163,540**	**15,220,190**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	15	532,302	452,672
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	16	8,232,595	2,167,335
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17	746,813	1,850,241
Տրված փոխառություններ	18	6,911,006	7,018,724
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**16,422,716**	**11,488,972**
Ընդամենը ակտիվներ		**31,586,256**	**26,709,162**
Սեփական կապիտալ և այլ պարտավորություններ			
Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ	19	1,497,584	1,497,584
Էմիսիոն եկամուտ		267,999	267,999
Չբաշխված շահույթ, վնաս	20	(10,689,907)	(9,607,057)
Վերագնահատումների գծով պահուստ	14	13,246,195	13,240,198
Ընդամենը սեփական կապիտալ		**4,321,871**	**5,398,724**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	21	11,288,969	14,340,100
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**11,288,969**	**14,340,100**
Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ վարկեր և փոխառություններ	21	6,124,275	153,808
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	22	9,800,468	6,782,826
Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեին	23	50,673	33,704
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**15,975,416**	**6,970,338**
Ընդամենը պարտավորություններ		**27,264,385**	**21,310,438**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**31,586,256**	**26,709,162**

Ֆինանսական հաշվետվությունները (էջ 2-27) հաստատվել են ընկերության ղեկավարության կողմից 2023թ. նոյեմբերի 13-ին:

«ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ

Գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ **Արմեն Պետրոսյան**

Կոնցեպտում ՓԲ ընկերության լիազոր ներկայացուցիչ՝ **Միխթար Կոտանիդիս**

«ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծանոթ.	2022թ.	2021թ.
Հասույթ	5	4,406,704	3,660,396
Իրացման ինքնարժեք	6	(4,304,807)	(3,717,982)
Համախառն շահույթ		**101,897**	**(57,586)**
Այլ եկամուտ	7	2,012,169	4,233,604
Իրացման ծախսեր	8	(192,494)	(161,750)
Վարչական ծախսեր	9	(372,630)	(283,457)
Գործառնական այլ ծախսեր	10	(5,614,049)	(4,594,458)
Գործառնական գործունեության արդյունք		**(4,065,107)**	**(863,647)**
Ֆինանսական ծախս	11	(221,089)	(150,343)
Այլ ֆինանսական հոդվածներ	12	3,150,442	2,515,073
Շահույթը մինչև շահութահարկով հարկումը		**(1,135,754)**	**1,501,083**
Շահութահարկի գծով (ծախս)եկամուտ	13	-	-
Զուտ շահույթ		**(1,135,754)**	**1,501,083**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**(1,135,754)**	**1,501,083**

«ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ

Գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ **Արմեն Պետրոսյան**

Կոնցեպտում ՓԲ ընկերության լիազոր ներկայացուցիչ՝ **Մխիթար Կոտանիդիս**

«ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերագնահատման գծով պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը
Մնացորդ առ 01 հունվարի 2021թ.	**1,746,250**	**835,338**	**-**	**(11,116,902)**	**(8,535,314)**
Առանձնացում	(248,666)	(567,339)			(816,005)
Վերագնահատում			13,240,198		13,240,198
Նախորդ ժամանակաշրջանի սխալների ճշտում				8,762	8,762
Տարվա շահույթ (վնաս)	-	-		1,501,083	1,501,083
Մնացորդ առ 01 հունվարի 2022թ.	**1,497,584**	**267,999**	**13,240,198**	**(9,607,057)**	**5,398,724**
Առանձնացում					-
Վերագնահատում			5,997		5,997
Նախորդ ժամանակաշրջանի սխալների ճշտում				52,904	
Տարվա շահույթ (վնաս)		-		(1,135,754)	(1,135,754)
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2022թ.	**1,497,584**	**267,999**	**13,246,195**	**(10,689,907)**	**4,268,967**

«ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ

Գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ **Արմեն Պետրոսյան**

Կոնցեպտում ՓԲ ընկերության լիազոր ներկայացուցիչ՝ **Մխիթար Կոտանիդիս**

«ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ
2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2022թ.	2021թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Վաճառքների գծով ստացված դրամական միջոցներ	2,468,932	2,103,650
Այլ մուտքեր	58,234	38,513
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ	(2,853,019)	(2,194,060)
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ	(153,743)	(160,964)
Վճարումներ պետական բյուջե	(141,094)	(95,148)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների այլ արտահոսքեր	(72,630)	(22,315)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**(693,320)**	**(330,324)**
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների վաճառքից	7,482	73,626
Հիմնական միջոցների ձեռքբերումից	(4,846)	(6,370)
Տրված փոխառությունների վերադարձ	-	125
Տրված փոխառություններ	(6,370,150)	-
Ներդրումային գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**(6,367,514)**	**67,381**
Ֆինանսական գործունեությունից դրամական հոսքեր		
վարկերի և փոխառությունների ստացումից	6,039,670	192,244
վարկերի և փոխառությունների մարումից	(80,211)	(82,650)
Ֆինանսական գործունեությունից դրամական զուտ հոսքեր	**5,959,459**	**109,594**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**(1,101,375)**	**(153,349)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(2,053)	(1,891)
Դրամական միջոցների մնացորդ առ 1 հունվարի	**1,850,241**	**2,005,481**
Դրամական միջոցների մնացորդ առ 31 դեկտեմբերի	**746,813**	**1,850,241**

«ՆԱՏՖՈՒԴ» ՓԲԸ

Գործադիր տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ **Արմեն Պետրոսյան**

Կոնցեպտում ՓԲ ընկերության լիազոր ներկայացուցիչ՝ **Մխիթար Կոտանիդիս**

«ՆԱՏՖՈՒԴ» «НАТФУД» «NATFOOD» 02701999 L-95